ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/87

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի տնօրեն՝

Յա. Խերիմյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 01Ա000817)

Ներկայացուցիչ՝ Հ. Պարսամյանի (լիազորագիր, տրված՝ 17.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ /26/9721-2019 գրությամբ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 06.06.2019թ. թիվ 08/15.3/7288-19 գրության հիման վրա, 11.06.2019թ.

թիվ /26/9721-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

01.06.2019թ.-ին էլեկտրոնային փոստով Ընկերության գործադիր տնօրեն Յ. Խերիմյանը ստացել է ծանուցում՝ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության միջև 28.12.2015թ. կնքված թիվ «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16-2-3» պայմանագիրը 31.05.2019 թվականից լուծելու վերաբերյալ, որն իրավաչափ չէ:

Անդրադառնալով վերը նշված ծանուցմանը՝ Ընկերություն նշել է, որ էլեկտրոնային փոստով պայմանագիրը ծանուցելու վերաբերյալ համաձայնություն պայմանագրային կողմերը չունեն, այսինքն, ինքնին էլեկտրոնային փոստով ուղարկված գրությունը չի կարող համարվել պայմանագրի լուծման ծանուցում: Ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ «Պայմանագիրը փոփոխելու և լուծելու կարգը» հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, այսինքն, թիվ «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16-2-3» պայմանագրի կողմերի դեպքում ևս պայմանագրի լուծման վերաբերյալ կողմերը պետք է կազմեին հասարակ գրավոր փաստաթուղթ, ինչը չի արվել:

Պայմանագրի լուծման ծանուցումը ոչ իրավաչափ է: Այն չի համապատասխանում օրենքին և պայմանագրային պայմանավորվածություններին, պայմանագրային կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորություններին: Ծանուցման ոչ իրավաչափ լինելը հաստատվում է ստորև ներկայացվող փաստերով:

Պայմանագրի 2.1.3. ենթակետի համաձայն՝ Պատվիրատուի մոտ պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքն առաջանում է Կատարողի կողմից պայմանագիրն էականորեն խախտելու դեպքում: Պայմանագրի նույն ենթակետի համաձայն պայմանագրի

էական խախտում է համարվում, եթե կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի թիվ 1 («Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց») հավելվածով սահմանված պահանջներին և խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 2.1.3. ենթակետի համաձայն պայմանագրի միակողմանի լուծման համար պետք է երկու պայմանի միաժամանակյա առկայություն, այն է՝ կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի թիվ 1 հավելվածով («Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց») սահմանված պահանջներին և խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը: Պետք է նկատի ունենալ, որ պայմանների ստորակետով թվարկման դեպքում պահանջվում է բոլոր պայմանների միաժամանակյա առկայություն:

Էական է համարվում պայմանագրի այնպիսի խախտումը, որը մյուս կողմին պատճառում է այնպիսի վնաս, որը պայմանագրի մյուս կողմին զգալիորեն զրկում է նրանից ինչ իրավասու էր ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Այս հիմքը իրականության մեջ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի հետ հարաբերություններում տեղ չի գտել, քանի որ 2019 թվականին կատարված աշխատանքները յուրաքանչյուր ամիս Կատարողից ընդունվել են և աշխատանքի համար Կատարողը վճարվել է: Հետևաբար, այդ դեպքում, այդ ինչ վնասի մասին պատվիրատուն կարող է խոսել, որն իրեն զգալիորեն զրկել է նրանից ինչ իրավասու էր ակնկալել պայմանագիրը կնքելիս: Ընկերությունը մինչև 2019 թ. ապրիլը ներառյալ ներկայացրել է կատարողականները, որոնք մինչև մարտ ամիսը ներառյալ ընդունվել են պատվիրատուի կողմից և ընկերությանը կատարված աշխատանքների դիմաց վճարվել է:

Պատվիրատուի աշխատողները չեն կարող միակողմանի՝ մեկ - երկու զեկուցագիր գրել իրենց վերադասին և պահանջել, որ պայմանագիրը միակողմանի լուծվի: Իսկ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի դեպքում հենց սա էլ կատարվել է:

Կատարողի կողմից պայմանագրային աշխատանքների թերի կատարման դեպքում առաջանում է Պատվիրատուի 2.1.2.-րդ ենթակետով նախատեսված իրավունքը՝ ոչ պատշաճ որակի կատարված Աշխատանքը ընդունելու հիմքով պայմանավորված:

ՀՀ կառավարության 4 նոյեմբերի 2010 թվականի N 1419-Ն «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու

կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի 1942-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգը՝ համաձայն որոշման հավելվածի:

Թիվ 1419-Ն որոշման համաձայն ավտոմոբիլային ճանապարհների պահպանման համար սահմանվում են հետևյալ ժամանակահատվածները՝

1) ընթացիկ ամառային պահպանման համար (գարուն-ամառ-աշուն ժամանակահատված) – տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 16-ը.

2) ընթացիկ ձմեռային պահպանման համար (ձմեռվա ժամանակահատված) - տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ը և նոյեմբերի 16-ից մինչև հունվարի 1-ը:

Թիվ 1419-Ն որոշման 25-րդ կետի համաձայն կապալառուն պետք է վարի ավտոմոբիլային ճանապարհների պահպանման աշխատանքների մատյան, որը պետք է լինի կարված, համարակալված էջերով և պատվիրատուի կողմից կնքված: Մատյանը պետք է պահվի կապալառուի գրասենյակում և տրամադրվի տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության լիազոր ներկայացուցիչներին՝ ճանապարհների պահպանման վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ գրանցելու նպատակով:

Նշված որոշման 26-րդ կետի համաձայն ավտոմոբիլային ճանապարհների պահպանման դիտարկումները և պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է պատասխանատուի կողմից: Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ընդունումը կատարվում է հետևյալ կերպ՝

1)Պահպանման միջանկյալ դիտարկում

Ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման միջանկյալ դիտարկումներն իրականացվում են յուրաքանչյուր ամիս՝ առնվազն երեք անգամ: Միջանկյալ դիտարկման ժամանակ ստուգվում է ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային կամ ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների համապատասխանությունը

պահանջվող ցուցանիշներին և առկա թերություններն արձանագրվում են ավտոմոբիլային ճանապարհի պահպանման միջանկյալ դիտարկման ամփոփագրում (որոշմամբ ամրագրված թիվ Ձև 2 և Ձև 3 ձևաթղթերի համաձայն): Արձանագրված թերությունները և դրանց վերացման ժամկետները գրանցվում են նաև ավտոմոբիլային ճանապարհների պահպանման աշխատանքների վարման մատյանում:

Պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումն իրականացվում է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա յոթերորդ աշխատանքային օրը: Հիմնվելով միջանկյալ դիտարկումների արդյունքների վրա, կատարվում է ճանապարհի պահպանման գնահատումը՝ արդյունքները ձևակերպելով ճանապարհի պահպանման մակարդակի գնահատման (աշխատանքների ընդունման) ամսական ամփոփագրում:

Ավտոմոբիլային ճանապարհի պահպանման միջանկյալ դիտարկման ամփոփագրերում և պահպանման աշխատանքների վարման մատյանում գրանցումների հիման վրա կատարվում է ավտոմոբիլային ճանապարհի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը:

Սակայն, որևէ ապացույց դրված չէ պայմանագիրը 2.1.3 ենթակետով լուծելու հիմքում: Եվ որևէ միջանկյալ դիտարկման ամփոփագիր, որը կազմվել է Ձև 2 և Ձև 3 ձևաթղթերի համաձայն առկա չէ: Չի կազմվել և դրանց հիման վրա պահպանման աշխատանքների վարման մատյանում գրանցում կատարված չէ:

Քանի որ պայմանագրի լուծման ծանուցումը պայմանագրով սահմանված կարգով չի իրականացվել և առկա չեն պայմանագիրը լուծելու հիմքեր, ապա որևէ իրավական հետևանք պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցման հետ չպետք է կապվի:

«Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ն խնդրել է իրեն չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/87 ընթացակարգի շրջանակներում 17.06.2019թ. ժամը 10:10-ին և 27.06.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.06.2019թ. թիվ 08/15.3/7288-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 28.12.2015թ. կնքվել է թիվ «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

Նշված Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի N 1 հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների խախտում, ինչի արդյունքում Նախարարությունը՝ հիմք ընդունելով կնքված պայմանագրի 2.1.3 կետի դրույթները, միակողմանի լուծել է վերոհիշյալ պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/87 ընթացակարգի շրջանակներում 17.06.2019թ. ժամը 10:10-ին և 27.06.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) և «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 28.12.2015թ. կնքվել է «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3» ծածկագրով պետության կարիքների համար ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը ստանձնել է Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ

ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (հետայսու՝ Աշխատանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ին ուղղված 31.05.2019թ. թիվ 08/15.3/7106-19 գրությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ /26/9721-2019 գրությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 06.06.2019թ. թիվ 08/15.3/7288-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ

կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի (ուժը կորցրած է ճանաչվել 25.04.2017թ.) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 28.12.2015թ. կնքվել է «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3» ծածկագրով պետության կարիքների համար ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը ստանձնել է Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև 31.12.2020թ. ներառյալ:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում 5 տարի՝ 01.01.2016թ.-31.12.2020թ.:

Պայմանագրի 4-րդ կետի 4.1.1 ենթակետով սահմանվել է, որ 2017 և հաջորդող տարիների աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 04.02.2016թ., 30.01.2017թ., 29.01.2018թ. կնքվել են համապատասխանաբար՝ թիվ «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3/2016», «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3-2017»,«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3-2018» համաձայնագրե-րը, որոնց հիման վրա «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ն իրականացրել, իսկ Պատվիրատուն ընդունել է Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

29.01.2019թ. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև կնքվել է «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3-2019» համաձայնագիրը, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն նույն համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրաուին, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել աշխատանքները և վճարել դրանց համար:

«Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ին ուղղված 31.05.2019թ. թիվ 08/15.3/7106-19 գրությամբ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը հայտնել է, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են խախտումներով և թերություններով, ինչը չի համապատասխանում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող տեխնիկական բութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, 31.05.2019 թվականից միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 2.2.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, **իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:**

Պայմանագրի 2.1.2 ենթակետով սահմանվել է, որ եթե կատարվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք, ապա Պատվիրատուն իրավունք ունի՝

ա) չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն Պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման համար ողջամիտ ժամկետ և պահանջել կատարողից վճարելու սույն Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 3.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի ամսաթիվը:

Պայմանագրի 3.2 ենթակետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է Կողմերի միջև Պայմանագրի շրջանակներում՝

- 01.02.2019թ. կնքված 2019թ. հունվար ամսվա ժամանակահատվածի համար Ընկերության կողմից կատարված աշխատանքների հանձնման-ընդունման N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3-1» արձանագրությունը, Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու մասին N 1 ակտը, Պայմանագրի կատարման մասին N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3-1» **դրական եզրակացությունը**, որի համաձայն՝ իրականացված աշխատանքներում անհամապատասխանությունները բացակայում են.
- 01.03.2019թ. կնքված 2019թ. փետրվար ամսվա ժամանակահատվածի համար Ընկերության կողմից կատարված աշխատանքների հանձնման-ընդունման N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3-2» արձանագրությունը, Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու մասին N 2 ակտը, Պայմանագրի կատարման մասին N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3-2» **դրական եզրակացությունը**, որի համաձայն՝ իրականացված աշխատանքներում անհամապատասխանությունները բացակայում են.
- 01.04.2019թ. կնքված 2019թ. մարտ ամսվա ժամանակահատվածի համար Ընկերության կողմից կատարված աշխատանքների հանձնման-ընդունման N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3-3» արձանագրությունը, Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու մասին N 3 ակտը, Պայմանագրի կատարման մասին N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3-3» **դրական եզրակացությունը**, որի համաձայն՝ իրականացված աշխատանքներում անհամապատասխանությունները բացակայում են:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերն, արձանագրում եմ, որ գործում առկա չէ Պայմանագրի 2.2.1 ենթակետի համաձայն Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու վերաբերյալ Ընկերությանն անհապաղ գրավոր տեղեկացնելու, Պայմանագրի 3.2 ենթակետի համաձայն՝ Պայմանագրի պայմաններին չհամապատասխանող աշխատանքի արդյունքները չընդունելու և նույն կետով նախատեսված միջոցները (այդ թվում նաև՝ Պայմանագրի 2.1.2 ենթակետով նախատեսված անպատշաճ որակի Աշխատանքը սույն Պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման համար ողջամիտ ժամկետ սահմանելու) Պատվիրատուի կողմից կիրառելու վերաբերյալ որևէ ապացույց, որը հնարավորություն կտա եզրահանգել Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունը խախտելու փաստի արձանագրման համար, որը և հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը. այն է հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող Աշխատանք կատարելու և Պատվիրատուի կողմից այն չընդունելու փաստը:

Գտնում եմ, որ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցիների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ /26/9721-2019 գրությամբ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**